



Հաստատում եմ  
ունիտեն Ռ. Տոնոյան

### Գրքերից օգտվելու կանոնները

- 1) Գրադարանը գրքատրամադրում է իրականացնում գրադարանից դուրս կամ ընթերցասրահում օգտվելու համար:
- 2) Գրադարանից օգտվելու համար ընթերցողը պետք է ունենա ընթերցողական ժամանակավոր տոմս՝ բաժանորդագրվելով և մեկ տարվա համար վճարելով 300 դրամ՝ աշակերտների, 500 դրամ՝ ուսանողների համար:
- 3) Գիրքը ընթերցողին տրամադրվում է 15 օր սահմանափակ ժամկետով և օգտագործման ժամկետը մեկ անգամ երկարաձգելու իրավունքով, նոտաներից՝ 2 ամիս ժամկետով և ևս 2 անգամ երկարաձգելու իրավունքով, եթե այն սովյալ ժամանակահատվածում պահանջարկ չունի:
- 4) Գրադարանից առաջին անգամ օգտվող ընթերցողներին տրամադրվում է 1 գիրք, հետագայում առավելագույնը՝ 2 գիրք:
- 5) Գրքի վերադարձի ժամկետները խախտելու դեպքում ընթերցողը մուծում է տուգանք, սկսած ուշացման չորրորդ օրվանից՝ յուրաքանչյուր օրվա համար 50 դրամ:
- 6) Գրքի վերադարձի ժամկետը 3 անգամ խախտելու դեպքում ընթերցողը զրկվում է գրքերից օգտվելու իրավունքից 3 ամիս ժամկետով:
- 7) Գիրքը կորցնելու կամ վնասելու դեպքում ընթերցողը պարտավոր է՝
  - ա. փոխհատուցել կորուստը նույն գրքով,
  - բ. փոխհատուցել համարժեք գրքով՝ գրադարանին անհրաժեշտ գրքերի ներկայացված ցանկից,
  - գ. վճարել գրքի շուկայական գինը,
  - դ. վճարի չափը որոշվում է գրադարանի «Գրականության կորուստների վերականգնման և փոխհատուցման» հանձնաժողովի կողմից:
- 8) Գրադարանից դուրս չեն տրվում ամսագրեր, թերթեր, բառարաններ, տեղեկատուներ, մեկ օրինակ գրքեր: